# Յիշատակարան

Հայկական Հայագիտական Հանդէսի 2024 թուոյս երկու գիրքերու խմբագրման եւ հրատարակման աշխատանքներուն ընթացքին ականատես եւ ականջալուր եղանք համաշխարհային եւ հայկական քաղաքական իրադարձութիւններու, աննախընթաց դէպքերու: Արդարեւ,

Լիբանանի ընկերատնտեսական, քաղաքական անորոշութիւնը եւ նահանջը շարունակուեցան, թէեւ վերջ գտաւ Իսրայէլի հետ պատերազմը, որ տեւեց 66 օր եւ պատճառեց շուրջ 3500 մահեր, տասնեակ հազարաւոր վիրաւորներ, աւերեց քաղաքի գիւղեր, պատճառ դարձաւ շուրջ 1.500.000 ներքին գաղթականութեան, բնակչութեան կենսագործունէութեան խաթարման: Եւ ինչպէս 2020 Օգոստոս 4ի Պէյրութի նաւահանգիստի ահեղ պայթումէն ետք ՀՀՀ խմբագրական անդամներս ստացեր էինք հեռաձայնային, համացանցի, դիմատետրի թէ այլազան հաղորդամիջոցներով հարիւրաւոր նամակներ՝ Հանդէսի աշխարհատարած աշխատակիցներէն, ընթերցողներէն, բարեկամներէն, նոյնպէս եւ այս անգամ ստացանք զօրակցական հաղորդումներ, որոնց համար շնորհակալ ենք:

Սուրիոյ մէջ իշխանութիւնը տապալեցաւ եւ զգուշաւոր լաւատեսական շունչ մը կը տիրէ հոն այս օրերուն: Պաղեստին-Իսրայէլ հակամարտութեան ենթախորքին վրայ Ղազզայի դէմ իսրայէլեան 15ամսեայ յարձակումը ցարդ պատճառեց աւելի քան 43.000 մահ, 100.000 վիրաւոր եւ 1.200.000 գաղթականութիւն եւ այս պահուն մարդկային ու սեփականութեանց դէմ աւերածութիւնը կը շարունակուի: Կը շարունակուի նաեւ ռուս-ուքրանական պատերազմը:

Արցախի կորուստով ականատես եղանք գիւղերու հիմնայատակ կործանման, մշակութային յուշարձաններու ցեղասպանութեան գործընթացի յառաջացման: Անլոյծ մնացին Պաքուի բանտերուն մէջ Արցախի արգելափակեալ ղեկավարներու եւ գերեվարեալներու ազատ արձակման խնդիրները: Միջազգային քրէական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենօ Օքամփօ, բռնագրաւուած Արցախի հայ բնակչութեան նկատմամբ Ատրպէյճանի գործողութիւնները որակեց ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, եւ հայութեան յղած նամակով կոչ ըրաւ մշակելու ընդհանուր ռազմավարութիւն: Լա Հէյի դատարանը մերժեց Ատրպէյճանի նախնական առարկութիւնները՝ Ատրպէյճանի կողմէ ցեղապաշտական խտրականութեան բոլոր ձեւերու վերացման միջազգային պայմանագիրի Հայաստանի Հանրապետութեան պնդումները:

Համաշխարհային առումով ականատես կը մնանք մարդկային արժէհամակարգերու, խօսքի եւ գործի անհաւատալի հակասութիւններու, մարդկային իտէալներու խորտակումին:

Սակայն, ի հեճուկս վերոյիշեալ եւ այլ տագնապալի իրադարձութիւններուն, արձանագրուեցան նաեւ հպարտառիթ աննախընթաց դէպքեր.

Հայաստանի պատմութեան թանգարանին մէջ սկսաւ ցուցադրուիլ Բրիտանական թանգարանին մէջ պահուող Անահիտ դիցուհիի պրոնզաձոյլ կիսանդրին, Հիւսիս-Հարաւ մայրուղիին վրայ սկսան կառուցուիլ 920 մեթր ընդհանուր երկարութեամբ 2 նոր փապուղի եւ 17 կամուրջ, առաջին անգամ Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ ռազմական համագործակցութեան համաձայնագիր ստորագրուեցաւ:

*Society of Armenian Studies*ը եւ Ժընեւի Համալսարանի հայագիտական կեդրոնը նշեցին իրենց հիմնադրութեան յիսնամեակը, Հայ Կաթողիկէ երջանկայիշատակ կաթողիկոս-պատրիարք կարդինալ Աղաճանեանի սրբացման գործընթացը սկիզբ առաւ համալսարանական հանդիսութեամբ, Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութեան 2010էն ի վեր դադրած Հասկ հայագիտական հանդէսը վերահրատարակուիլ սկսաւ, լոյս ընծայելով ԺԳ. տարուան (2011-2023) հատորը, Տարօն Աճեմօղլու - երկու այլ գործակիցներու հետ - արժանացաւ տնտեսագիտութեան Նոպէլեան մրցանակին, Ֆրանսայի մէջ կայացած ամառնային Ողիմպիական խաղերուն Հայաստանի Հանրապետութենէն, Պահրէյնէն եւ Ռուսաստանի դաշնութենէն մասնակցած հայ մարզիկներ գրաւեցին պատուաւոր դիրքեր՝ ըմբշամարտի եւ ծանրաքարշութեան մարզաձեւերուն մէջ: Իսկ Հայկազեան համալսարանը անցաւ իր 70րդ կրթաշրջանին 723 ուսանողներով (որոնց 72ը՝ մագիստրականի), 94 դասախօսներով, 53 պաշտօնէութեամբ: Ան շարունակեց մարդակերտումի, լուսաւորումի, գիտահրատարակչական եւ մշակութային իր առաքելութիւնը:

ՀՀՀի խմբագրակազմս շնորհակալութիւն կը յայտնէ Հանդէսի 2024 տարուան լոյս գիրքերու աշխատակիցներուն, քարերարներուն, ու կը մաղթէ որ հայագիտութեան մշակները ողջմիտ տոկունութեամբ շարունակեն իրենց առաքումը հայագիտութեան:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Անդրանիկ Տագէսեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Արշալոյս Թոփալեան (✞), Արմէն Իւրնէշլեան, Սիլվա Փափազեան

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Սիլվիա Աճէմեան, Նանօր Գարակէօզեան, Երուանդ Երկանեան, Արտա Էքմէքճի Հրանուշ Խառատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Չիլինկիրեան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գրասենեակ